ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի «Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից աշխարհում հակամարտությունների կարգավորումն առանցքային նշանակություն ունեցող խնդիրներից է, քանզի հակամարտություններն անմիջական ազդեցություն են ունենում միջազգային անվտանգային միջավայրի և միջազգային հարաբերությունների վրա առհասարակ: Միևնույն ժամանակ այս գործընթացները բավական բարդ են կարգավորման գործընթացի վրա ազդող լրացուցիչ խնդիրների առումով: Հակամարտությունների կարգավորման գործընթացները պահանջում են թե՛ կողմերի, թե՛ գործընթացում ընդգրկված միջնորդների ակտիվ ու փոխլրացնող ջանքեր, նոր գաղափարներ և մոտեցումներ՝ որպես մարտահրավերների հաղթահարման կառուցողական գործընթացի կայուն երաշխիք:

Հարավկովկասյան տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման գործընթացների բարդությունը նախ և առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ այստեղ «բախվում» են ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային մի շարք դերակատարների շահերը: Ակնհայտ է, որ աշխարհաքաղաքական շահերի բախումը, այս կամ այն պետությանն աջակցությունը նպաստում է տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության խախտմանը՝ էապես դժվարացնելով հակամարտությունների խաղաղ կարգավորման հնարավորությունները:

Այս համատեքստում Մ. Պետրոսյանի ատենախոսության թեման և դրանում արծարծվող խնդիրներն արդիական են, ունեն զգալի տեսական ու գործնական նշանակություն ինչպես տարածաշրջանային հակամարտությունների, այնպես էլ առհասարակ էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացների համեմատական հետազոտության՝ դրանցում առկա խոչընդոտների ու տարբեր շահերի հավասարակշռման տեսանկյունից: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հարավկովկասյան տարածաշրջանում առկա

հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրությամբ՝ կարգավորման գործընթացի վրա ազդող գործոններն ու հիմնական օրինաչափությունները բացահայտման նպատակով:

Մ. Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Այս հետազոտությունն ամբողջական է և ընդգրկում է առաջադրված խնդիրների հետազոտության լիարժեք ծավալը՝ ապահովելով համապատասխան մտահանգումների տեսքով արված հետևությունները: Ատենախոսությունը համակարգված ուսումնասիրություն է, որում հակամարտությունների համեմատական վերլուծության նոր մոդելի հիման վրա ներկայացվել և վերլուծվել են Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացներին առնչվող կարևորագույն խնդիրները: Աշխատանքն ունի գիտագործնական կարևոր նշանակություն և խիստ արդիական է:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, թեմայի գիտական մշակվածության աստիճանը, և գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ներկայացված են նաև ատենախոսության գիտական նորույթը, տեսամեթոդաբանական հիմքերը, փաստարկված են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության առաջին՝ «Հակամարտությունների հետազոտության մեթոդներն ու համեմատական ուսումնասիրությունների մոդելավորման խնդիրները» գլխում հետազոտվում են հակամարտությունների ուսումնասիրության մեթոդներն ու համեմատական մոդելավորման խնդիրները՝ որպես տեսական հարցադրումներ: Այս համատեքստում առանձնակի ուշադրություն է դարձվում համապատասխան քաղաքագիտական մեթոդների ընտրությանը և կիրառությանը հակամարտությունների վերլուծության ժամանակ: Առաջին պլան են մղվում հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, ինչպես նաև սահմանվում է փոփոխականների համախմբի ընտրության խնդիրը հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների դեպքում:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Հարավային Կովկասի հակամարտությունների հատկանիշներն ըստ համեմատական վերլուծության ժամանակ օգտագործվող չափանիշների», հեղինակը ներկայացնում է Հարավային Կովկասի

հակամարտությունների հատկանիշները՝ հաշվի առնելով համեմատական վերլուծությունների ժամանակ օգտագործվող չափանիշները: Այս համատեքստում հետազոտվում են Արցախի, Հարավային Օսիայի, Աբխազիայի հակամարտությունների դեպքերը, որոնք միևնույն ժամանակ ենթարկվում են համեմատական վերլուծության՝ որպես կոնֆլիկտային քաղաքական գործընթացներ:

Ատենախոսության երրորդ՝ «Ժողովրդավարացման ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա: Հարավային Կովկասի դեպքը» գլխում ուսումնասիրվում և վերլուծվում է ժողովրդավարացման ազդեցությունը հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա: Այս համատեքստում, մասնավորապես, կարևորվում է հետկոնֆլիկտային հասարակություններում ժողովրդավարության խթանման խնդիրը: Քաղաքական ինստիտուտների արդյունավետացման առումով հետազոտվում է բազմակուսակցական համակարգի ձևավորման և կայացման խնդիրը տարածաշրջանի մասամբ ճանաչված և չճանաչված պետություններում: Արտաքին քաղաքականության ուղենշման տեսանկյունից ուսումնասիրվում է նաև նշված պետությունների դեպքում ինտեգրման հնարավորությունների խնդիրը:

Ատենախոսության շրջանակներում Մ. Պետրոսյանը համակողմանիորեն ներկայացրել և վերլուծել է հետազոտության գիտական նորույթով պայմանավորված խնդիրները՝ հասնելով ցանկալի արդյունքների: Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարված են առանցքային նշանակություն ունեցող եզրահանգումներ, ընդհանրացումներ և առաջարկություններ:

Հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները և գիտագործնական նշանակություն:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսության բովանդակությանը և դրա դրույթների համառոտ արտացոլումն է:

Թեկնածուական ատենախոսությունն աչքի է ընկնում թեմային համապատասխանող գիտահետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և հիմնավորվածությամբ, աշխատանքն ամբողջական է և համապատասխանում է գիտականության պահանջներին համապատ:

Բարձր գնահատելով Մ. Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունը, ինչպես նաև նկատի ունենալով հետազոտության թեմայի բազմակողմանիությունը՝ ցանկանում ենք ներկայացնել հետևյալ դիտողություններն ու նկատառումները ՝

1. Մ. Պետրոսյանը Հարավային Կովկասի հակամարտություններում ներկայացրել է միայն Ռուսաստանի հետապնդած շահերին ու դերակատարությանը, որի նշանակությունը, անկասկած, բացառիկ էր երեք հակամարտություններում էլ: Այնուհանդերձ աշխատանքում որևէ անդրադարձ չկա վերոնշյալ հակամարտություններում մեծ հետաքրքրություններ և շահեր հետապնդող այլ դերակատարների, մասնավորապես, Թուրքիայի որդեգրած քաղաքականությանը տարածաշրջանային հակամարտությունների նկատմամբ: Թե ԼՂ հակամարտության, թե վրաց-աբխազական հակամարտություններում Թուրքիան մեծ շահեր և հետաքրքրություն է ունեցել՝ ձգտելով իր մասնակցությամբ մեծացնել ազդեցությունը Հարավային Կովկասում:
2. Ատենախոսը, հանգամանորեն ներկայացրել է ԼՂ հակամարտության բանակցային գործընթացն և զարգացման փուլերը, այնուամենայնիվ, հարկ կլիներ անդրադառնալ նաև ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ առաջին փաստաթղթին՝ «Ժելեզնավոդսկի կոմյունիկեին»: 1991թ.-ին Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի նախաձեռնությամբ Ժելեզնավոդսկ քաղաքում ընդունվեց «Ժելեզնավոդսկի կոմյունիկեն», որը արցախյան կարգավորման առաջին կիսամիջազգային փաստաթուղթն է:
3. Հետաքրքիր կլիներ պարզել ևս մեկ՝ տարածաշրջանային գործոնի առկայությունը/բացակայությունը Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման գործընթացներում և դրական արդյունքի դեպքում՝ համեմատել այլ, օրինակ, բալկանյան հակամարտությունների համապատասխան գործոնի հետ:
4. Փաստորեն, հետխորհրդային տարածքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքն ու կարգավորման գործընթացը էապես տարբերվում են մյուս հակամարտությունների ընթացքներից ու կարգավորման գործընթացներից: Աշխատանքը կշահեր, եթե հետազոտական խնդիրների շարքում դիտարկվեր նաև դրա պատճառների բացահայտումը:

Այնուամենայնիվ, նշված դիտարկումները որևէ ձևով չեն նվազեցնում կատարված աշխատանքի գիտական ու գործնական կարևոր նշանակությունն ու ամբողջականությունը:

Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի «Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկությունները» ԻԳ. 00.02. «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոս՝
Գրիգոր Արշակյան

Քաղաքական գիտությունների դոկտոր,
ՀՀ Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հայրենադարձության և հետազոտությունների վարչության պետ

Պաշտոնական ընդդիմախոս Գրիգոր Արշակյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ Վաչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության պետ Լուսինե Ալեքսանյան

07.07.2020